Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 786 - Ա
որոշման

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օգնել Հայաստանի Հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Ջավախքի միակողմանի ծնողազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայ օգնության ֆոնդ (630 երկրորդ պողոտա, Նյու-Յորք, ԱՄՆ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության մարզեր և Ջավախք<br>բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 103,700,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության մարզերի, Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Ջավախքի 720 միակողմանի ծնողազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տարին երկու անգամ դրամական օգնության տրամադրում՝ շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների, ինչպես նաև տնայցերի հիման վրա: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 103,700,000 դրամի չափով, որից՝ դրամական օգնություն շահառուներին՝ 89,000,000 դրամ և կազմակերպական ծախսեր՝ 14,700,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) կապի և հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի.<br>2) ավտոմեքենաների վառելիքի ձեռքբերում՝ 1,200,000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի.<br>3) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով առանց ավելացված արժեքի հարկի.<br>4) մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում և ներմուծում՝ 11,500,000 դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը կազմելու են 14,700,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր բյուջեի 14.2 %-ը՝<br>1) կապի և հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով.<br>2) ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 1,200,000 դրամի չափով.<br>3) ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով.<br>4) ծրագրի իրականացման արդյունավետության ապահովման համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում և ներմուծում՝ 11,500,000 դրամի |

| | | |
|---|---|---|
| | | չափով: Ծրագրի ավարտից հետո ավտոմեքենան կշահագործվի շարունակական՝ 2006 թվականից իրականացվող, նույնաբովանդակ ծրագրերի շրջանակներում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ